# ՌՈՒՄԱՆԻՈ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃԱԿԱՏԻ ԺՈՂՈՎԻՆ

## ԿԸ ԽՕՍԻ ՍՈՎԵՏ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԷՆ ՏՈՆԿՈՒԼՈՎ

## «ԴԱՇՆԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԵՆ»

*Թիւ 1.— Քանի որ «Ալիք» իր թիւ 172-ում (7 Օգոստոս) «Մամուլ» վերնագրի տակ արժէքաւորում եւ գնահատում է միայն ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ մամուլը, ուստի հաճոյք պատճառելու համար իրեն տալիս ենք Ռումանիոյ «ՊԱՀԱԿ» թերթի հետեւեալ յօդուածը, որը արտատպել է Ամերիկայի «ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ» օրգան ԼՐԱԲԵՐԸ իր թիւ 122-ում:*

**«Պատգամաւորական Խորհրդաժողովը Ռումանահայ կեանքի խոշորագոյն երեւոյթն էր բառին լայն իմաստով, որովհետեւ անոր նպատակն էր՝ ոչ միայն համերաշխ գործակցութեան առաջնորդել Հայաստանեան տարրերը, այլ կը հետապնդէր շատ աւելի ընդարձակ, համաժողովրդական ծրագիր մը, այն է.— վերջ դնել ազգային մարմիններու եւ միութիւններու բաժան բաժան եւ յաճախ իրար խաչաձեւող գործունէութեան. ստեղծել բոլոր մարմիններու եւ միութիւններու գործունէութիւնը ներդաշնակող միակ ու միասնական կազմակերպութիւն մը, ոգեւորուած Հայաստանեան շունչով, դեմոկրատական լայն սկզբունքներով, պատրաստ միեւնոյն ատեն՝ սատարելու Ռումանիոյ առաջադիմական շարժումներուն եւ անողոք պայքար մղելու ֆաշիստական մութ ուժերու մնացորդներուն դէմ։**

*Ժողովին խօսած է նաեւ Սովետ Դեսպանատան Աւագ Քարտուղար Տոնկուլով, որուն ելոյթը մեծ խանդավառութիւն ստեղծած է եւ բուռն ծափահարութիւններով ողջունուած։ Ստորեւ կուտանք Սովետ Դիւանագէտ Տոնկուլովի ուղերձը, քաղելով «Պահակ»էն.—*

**«Ես կատարեալ վստահութիւն ունիմ, որ այն գործը որու համար հաւաքուած էք այստեղ, յաջողութեամբ պիտի վերջանայ։**

**Սովետ երկիրը եւ բանակը մեծ պայքարի մէջ են այսօր։**

**Հայ ժողովրդի հազարաւոր զաւակները կը թափեն իրենց արիւնը մեր երկրի ու հայրենիքի պատւոյն համար։ Պէտք չէ մոռնանք, որ այդ թանկագին արիւնը դեռ կը հոսի։**

**Հայ ժողովուրդը իր աշխատանքը նուիրած է պատերազմի յաջողութեան։ Երբեք չմոռնանք, որ Հայրենիքի ճակատագիրը կախում ունի այն բանէն, թէ՝ ինչպէս պիտի վերջանայ պատերազմը։**

**Այդ պատճառով անհրաժեշտ է, որ Հայերը միացնեն իրենց ուժերը։ Կատարելապէս ճիշդ գործ ըրիք, հաւաքուելով որ համայնքները միացնեն իրենց ուժերը ֆաշիզմի դէմ։ Աշխատեցէք ամէն գնով միանալ, որպէսզի կարենաք յաջողութեամբ պայքարիլ ֆաշիզմին դէմ։ Միացման կոչը կ՚ուղղուի բոլոր այն Հայերուն, որոնք կը սիրեն Սովետ Հայաստանը եւ պատրաստ են պայքարելու ֆաշիզմի դէմ։**

**Ֆաշիզմի դէմ պայքար եւ այդ նպատակով ալ Հայերու միութիւն — ահա սրբազան պարտականութիւնը ու գլխաւոր պատգամը մեր օրերուն։**

**Ձեր նոր կազմակերպութեան անդամները պիտի ըլլան ամէն ապարէզէ եւ դասակարգէ մարդիկ, համակիր Սովետական Հայաստանի։**

*Դաշնակները եւ Դաշնակներու համակիրները Հայ ժողովրդի թշնամիներն են:*

*Դաշնակները եւ Դաշնակներու համակիրները տեղ չունին այս միութեան մէջ:*

**Օգոստոս 23-էն վերջ Հայ գաղութի գործերուն գլուխը անցաւ Հայ Հայրենասէրներու Միութիւնը, որը այդ սկզբնական շրջանին դրական դեր մը ունեցաւ:**

**Ես կը յուսամ, թէ՝ ինչպէս որ ուս-ուսի, ձեռք-ձեռքի սկսաք աշխատանքի, ապագային ալ այդպէս պիտի շարունակէք։**

**Այն խնդիրները եւ նպատակները զորս դրիք՝ թանկագին են բոլորիդ համար. Ես վստահ եմ, որ բոլոր Հայերը պիտի օգնեն ձեզի այս գործին մէջ։**

**Ես վստահ եմ Հայերու միութեան ոգիին եւ անոնց հայրենասիրական բարձր զգացումներու մասին։**